ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր գիտությունն է համալիր կերպով ուսումնասիրում երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով :**

1) քարտեզագրությունը
2) երկրաբանությունը
3) լանդշաֆտագիտությունը
4) երկրագրությունը

2 **Ստորև բնութագրումով ո՞ր մեթոդին է վերաբերում:**

Քանակական մեթոդներից մեկն է: Այն առավել լայն կիրառում ունի հատկապես հասարակական աշխարհագրության մեջ: Նրա հիմնական նպատակը քանակական ելակետային տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է: Ո՞ր մեթոդն է.

1) վիճակագրական
2) քարտեզագրական
3) օդատիեզերական
4) մաթեմատիկական

3 **Ստորև թվարկված ուղություններից ո՞րն է համապատասխանում 45° ազիմուտին:**

1) հարավ-արևմուտք
2) հյուսիս-արևելք
3) հյուսիս-արևմուտք
4) հարավ-արևելք

4 **Ստորև թվարկված մասշտաբներից որո՞նք են համապատասխանում միջին մասշտաբի քարտեզներին:**

1) 1 : 200 000 — 1 : 1000 000
2) 1 : 50 000 — 1 : 100 000
3) 1 : 1000 000 — 1 : 2000 000
4) 1 : 10 000 — 1 : 200 000

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում նստվածքային օրգանական ծագման ապար:**

1) ավազ
2) տուֆ
3) տորֆ
4) կավ

6 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Աղավաղումների բնույթով պայմանավորված քարտեզագրական պրոյեկցիաները՝ լինում են հավասարամեծ, հավասարանկյուն և ազատ։
2) Որակական ֆոնի կիրառման դեպքում պատկերվող տարածքի տարբեր մասեր ներկվում են տարբեր գույներով, կամ ներկվում են ըստ որևէ հատկանիշի։
3) Ծովային հոսանքները շարժման գծերով են պատկերվում քարտեզի վրա։
4) Մերձբևեռային լայնությունները քարտեզագրելու համար օգտագործում են գլանային պրոյեկցիան։

7 **Ո՞ր ժամանակաշրջանին է համապատասխանում անթրոպոգեն փուլը։**

1) մեզոզոյան
2) պրոտերոզոյան
3) կայնոզոյան
4) պալեոզոյան

8 **Ինչպիսի՞ արագությամբ է Հարավային Ամերիկան հեռանում Աֆրիկայից։**

1) 3-4 սմ/տարի
2) 7-8 սմ/տարի
3) 9-10 սմ/տարի
4) 1-2 սմ/տարի

9 **Ուսումնասիրությունների համաձայն երկրագունդը տարեկան մոտավորապես որքա՞ն ջուր է կորցնում։**

1) 0,2 կմ^3
2) 0,3 կմ^3
3) 0,5 կմ^3
4) 0,1 կմ^3

10 **Մթնոլորտի ձևավորման անթթվածնային փուլի ժամանակ ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը։**

1) ազոտ
2) ածխաթթու գազ
3) օզոն
4) ջրային գոլորշի

11 **Ո՞ր դարաշրջանում են առաջացել ձվածին կաթնասունները։**

1) Կայնոզոյան
2) Պալեոզոյան
3) Պրոտերոզոյան
4) Արխեյան

12 **Ո՞ր դարաշրջանում է ցամաքում ձևավորվել հողային ծածկույթը.**

1) Կայնոզոյան
2) Պալեոզոյան
3) Պրոտերոզոյան
4) Արխեյան

13 **Ո՞ր աստիճանի ջուրն է ամենախիտը։**

1) +5˚C
2) +6˚C
3) +7˚C
4) +4˚C

14 **Ո՞ր զոնայում է մարդը մեծամասամբ զբաղվում ձկնորսությամբ և եղջերվապահությամբ։**

1) տայգա
2) անապատ
3) սավաննա
4) տունդրա

15 **Ո՞ր զոնայում են մեծամասամբ գերակշռում սևահողերը։**

1) տափաստան
2) անապատ
3) սավանա
4) տունդրա

16 **Ո՞ր նեղուցուցով են բաժանվում իրարից Աֆրիկան ու Եվրոպան։**

1) Ջիբրալթարի
2) Մալակկայի
3) ԼաՄանշի
4) Մոզամբիկի

17 **Ո՞ր թերակղզին է Աֆրիկայում։**

1) Ֆլորիդայի
2) Առնհեմլենդ
3) Սոմալի
4) Ապենինյան

18 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ավստրալիան ամենաչոր մայրցամաքն է։
2) Ավստրալիան հարուստ է լճերով։
3) Ավստրալիայի ամենախոշոր գետը Օբն է։
4) Ավստրալիան չունի արտեզյան ավազան։

19 **Ո՞ր լեռնագագաթն է գտնվում Անտարկտիդայում։**

1) Կոսցյուշկո
2) Մոնբլան
3) Կիլիմանջարո
4) Վինսոն

20 **Ո՞ր ջրվեժն է Հարավային Ամերիկայում։**

1) Վիկտորիա
2) Նիագարա
3) Անխել
4) Լիվինգստոն

21 **Ո՞ր կենդանին է ապրում Հյուսիսային Ամերիկայում։**

1) կենգուրու
2) բիզոն
3) բադակտուց
4) լամա

22 **Ո՞ր հրաբուխը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Օրիսաբա
2) Հեկլա
3) Կրակատաու
4) Էտնա

23 **Ո՞ր դաշտավայրը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Միջագետքի
2) Օրինոկոյի
3) Թուրանի
4) Մեկոնգի

24 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Պետական սահմանը կարող է լինել լեռնագրական, եթե անցկացված է լեռների ջրբաժաններով կամ գետերի հունով։
2) Պետական սահմանը կոչվում է աշխարհագրական, եթե անցնում է միջօրեականով կամ զուգահեռականով։
3) Անտարկտիկայի ջրերը մտնում են Ավստրալիայի տնտեսական գոտու մեջ։
4) Ինքնիշխան պետությունը քաղաքականորեն կազմակերպված տարածք է, որը կառավարվում է դրա վրա ձևավորված ինքնիշխան կառավարության կողմից և ճանաչված է միջազգային հանրության մեծ մասի կողմից։

25 **Ո՞րը միգրացիայի տեսակ *չէ։***

1) ժամանակավոր
2) սեզոնային
3) քաղաքական
4) մշտական

26 **Ո՞ր ռասայի ներկայացուցիչներն են առանձնանում սև, կոշտ և ուղիղ մազերով, մաշկի դեղնավուն գույնով, տափակ դեմքով, խիստ արտահայտված այտոսկրերով, աչքի նեղ բացվածքով և վերին կոպի խիստ զարգացած ծալքով։**

1) եվրոպեոիդ
2) մոնղոլոիդ
3) նեգրոիդ
4) ավստրալոիդ

27 **Ո՞ր քաղաքը *չի* մտնում Հռենոս-Ռուր քաղաքային խոշոր կուտակման մեջ։**

1) Դորտմունդ
2) Դույսբուրգ
3) Դրեզդեն
4) Դյուսելդորֆ

28 **Ո՞ր ռեսուրսն է համարվում վերականգնվող։**

1) քամու էներգիա
2) անտառափայտ
3) արեգակնային էներգիա
4) երկաթաքար

29 **Աշխատանքի ո՞ր բաժանման ժամանակ են երկրները մասնագիտանում որևէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ։**

1) հասարակական
2) միջշրջանային
3) միջազգային
4) աշխարհագրական

30 **Ո՞ր երկիրը չի համարվում առաջատար համաշխարհային ածխարդյունաբերության մեջ։**

1) Հնդկաստան
2) Վրաստան
3) Ռուսաստան
4) Չինաստան

31 **Ինչո՞վ պայմանավորված չէ սև մետաղաձուլության մեջ զարգացող երկրների բաժնի մեծացումը։**

1) սպառման ծավալների աճը
2) էկոլոգիապես վնասակար արտադրությունները դուրս բերելու և զարգացող երկրներ փոխադրելու միտումը
3) գիտական կենտրոնների առատությունը
4) այդ երկրների վառելիքաէներգետիկ հարուստ պաշարները

32 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն ունի ելք դեպի ծով։**

1) Սլովակիա
2) Մոլդովա
3) Ռումինիա
4) Չեխիա

33 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առաջատար վարդի յուղի արտադրությամբ։**

1) Լեհաստան
2) Բուլղարիա
3) Բելոռուս
4) Հունգարիա

34 **Ստորև թվարկվածներից ո՞րն է երկրամաս։**

1) Խաբարովսկ
2) Չեչնիա
3) Դաղստան
4) Սախա

35 **Ստորև թվարկվածներից ո՞ր թերակղզին Հարավային Եվրոպայում չէ։**

1) Ապենինյան
2) Յուկատան
3) Պիրենեյան
4) Բալկանյան

36 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրի նավատորմիղն է գտնվում աշխարհի առաջին տասնյակում։**

1) Հունաստան
2) Չեռնոգորիա
3) Սլովենիա
4) Լեհաստան

37 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկիրը *չի* համարվում Բենիլյուքսի երկիր։**

1) Նիդեռլանդներ
2) Դանիա
3) Լյուքսեմբուրգ
4) Բելգիա

38 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը մոտավորապես 82 տարի։**

1) Նիգերիա
2) Նիկարագուա
3) Նամիբիա
4) Նորվեգիա

39 **Քարտեզ 1-ում ո՞ր երկիրն է նշված Դ տառով:**

1) Իրաք
2) Լիբանան
3) Քուվեյթ
4) Հորդանան



Քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր մայրաքաղաքն է նշված Ը տառով:**

1) Անկարա
2) Թեհրան
3) Մասկատ
4) Թբիլիսի

41 **Քարտեզ 2-ում Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:**

1) Զանգեզուրի
2) Արեգունու
3) Գեղամա
4) Վարդենիսի

42 **Քարտեզ 2-ում Գ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Վայոց ձորի
2) Արմավիրի
3) Կոտայքի
4) Արարատի



Քարտեզ 2

43 **Ո՞ր լեռնագագաթը *չի* գտնվում Սասնա լեռներում։**

1) Անդոկ
2) Մարութա
3) Ջիլո
4) Ծովասար

44 **Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը։**

1) 1989թ
2) 1990թ
3) 1991թ
4) 1988թ

45 **Ո՞ր հանքավայրում կա նեֆելինային սիենիտ։**

1) Շվանիձոր
2) Հրազդան
3) Կապուտան
4) Սվարանց

46 **Ո՞ր բնակավավայրում է դիտվել ամենացածր ջերմաստիճանը։**

1) Մարտունի
2) Ախուրյան
3) Վարդենիս
4) Պաղակն

47 **Ո՞ր կլիմայական գոտում են թափվում ամենաշատ տեղումները։**

1) Բարեխառն լեռնային
2) Ցուրտ լեռնային
3) Ձյունամերձ լեռնային
4) Չոր ցամաքային

48 **Ո՞ր գետն է սկիզբ առնում Արագածի ու Փամբակի լանջերից։**

1) Ազատ
2) Ողջի
3) Վեդի
4) Քասաղ

49 **Ո՞ր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներն են ապրում Լոռու մարզի Լերմոնտովո և Մեղովկա բնակավայրերում։**

1) ռուսներ
2) եզդիներ
3) ասորիներ
4) հույներ

50 **ՀՀ ո՞ր քաղաքն է գտնվում Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում։**

1) Ստեփանավան
2) Վանաձոր
3) Նոյեմբերյան
4) Սպիտակ

51 **Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով։**

1) Սաուդյան Արաբիան և Չադը
2) Ռուսաստանը և Բրազիլիան
3) Վրաստանը և Նորվեգիան
4) Կանադան և Տաջիկստանը

52 **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.**

1) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
2) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
3) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
4) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը

53 **Ո՞ր երկիրն է առավել քիչ անտառապատ.**

1) Ինդոնեզիա
2) Կանադա
3) Իրան
4) Ռուսաստան

54 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) պղնձաձուլությունը
2) կարի արտադրությունը
3) կոնյակի արտադրությունը
4) սարքաշինությունը

55 **Տրվածներից ո՞րը էրոզիայի առաջացման պատճառ *չէ*։**

1) խախտված հողերի վերականգնումը
2) արոտավայրերի գերարածեցումը
3) գետերի վարարումները։
4) անտառային տարածքների կրճատումը

56 **Գրել այն երկրների համարները, որոնք մտնում են աշխարհի առաջին տասնյակի մեջ մեքենաշինության զարգացվածությամբ։**

1) Իրաք
2) Գերմանիա
3) Ճապոնիա
4) Չինաստան
5) Բանգլադեշ
6) Հնդկաստան
7) Ղազախստան
8) Աֆղանստան

57 **Գրել այն երկրների համարները, որոնք կոշկեղենի գլխավոր արտադրողներն են։**

1) Իտալիա
2) Գերմանիա
3) Իսպանիա
4) Չինաստան
5) Տաջիկստան
6) Հնդկաստան
7) Ինդոնեզիա
8) Ուզբեկստան

58 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք հարուստ են վարելահողերով։**

1) Իրան
2) Կանադա
3) Դանիա
4) Չինաստան
5) ԱՄՆ
6) Հնդկաստան
7) Ղրղզստան
8) Պակիստան

59 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են կարտոֆիլի համախառն բերքով։**

1) Օման
2) Արգենտինա
3) Կոնգո
4) Չինաստան
5) ԱՄՆ
6) Հնդկաստան
7) Վրաստան
8) Ռուսաստան

60 Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են սուրճի արտադրությամբ։

1) Կոլումբիա
2) Կանադա
3) Եթովպիա
4) Բրազիլիա
5) ԱՄԷ
6) Զամբիա
7) Ինդոնեզիա
8) Պակիստան

61 Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով։

1) Բրազիլիա
2) Շվեդիա
3) Բելգիա
4) Չինաստան
5) ԱՄՆ
6) Հնդկաստան
7) ՀԱՀ
8) Եգիպտոս

62 Տրված տարածաշրջանները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով՝ 2022թ տվյալներով։

1) Հարավային Ասիա
2) Հյուսիային Եվրոպա
3) Արևմտյան Եվրոպա
4) Արևելյան Ասիա

63 Տրված ԱՄՆ նահանգները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ։

1) Ֆլորիդա
2) Արիզոնա
3) Տեխաս
4) Կալիֆորնիա

64 Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը, եթե դրանցից մեկը հս.լ.11˚-ի վրա է, իսկ մյուսը՝ հվ.լ.10˚-ի։

65 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ.29° և արլ.ե. 115°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը մարտի 21-ի կեսօրին:

66 Օդի հարաբերական խոնավությունը 24 գ/սմ³ է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 60 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

67 Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե այնտեղ ընդհանրապես ապրում է 90 մլն. մարդ, իսկ կոնկրետ գյուղերում՝ 18 մլն. մարդ:

68 **Որքա՞ն է երկրի բնակչության տարեկան բացարձակ մահացությունը, եթե այնտեղ ապրում է 3 մլն մարդ, իսկ մահացության ցուցանիշը 6‰ է։**

69 **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է։
2) Այստեղ է ձևավորվել Եվրոպայի ամենահզոր տրանսպորտային համակարգը։
3) Ռուրը աշխարհի խոշորագույն նավթային ավազաններից է։
4) Արդյունաբերության մեջ մեծ տեղ են գրավում էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը։
5) Շատ խիտ է բնակեցված Հյուսիսգերմանական դաշտավայրը։
6) Գերմանիան աշխարհի առավել քաղաքայնացված երկրներից է։

70 **ՀՀ մարզերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Շիրակի մարզի գերխոշոր գյուղերն են Ախուրյանը և Ազատանը։
2) Լոռու մարզում է Շամլուղի պղնձահանքը։
3) Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքը հայտնի է գարեջրի արտադրությամբ։
4) Արագածոտնում է Մաստարայի սելավային գետակը։
5) Արմավիրի մարզի լեռնաշղթաներից են Ուրծը և Երանոսը։
6) Արարատի մարզում է Շամիրամի լավային սարավանդը։